

83 Տ
Գ-96

Գ Ր Ի Մ Մ

ԿՃԶ

**ԱՍՏՂԷ ԴՐԱՄ
ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԱՂՔԱՏԸ
ՍՊԻՏԱԿ ՕՁ**

Գերսևաներենից թարգմ.
ՏԻՐՈՒՀԻ ԿՈՍՏԱՆԽԱՆԳ.



Թ. Ի. Ֆ. Լ. Ի. Ս.

Տպարան Ս. Ըարաձեի, Նիկոլ. փ. տ. 21

1897

345 h 436

11. 11. 11.

✓

2-

U.S. 24 9 11 11
U.S. 24 9 11 11
U.S. 24 9 11 11

83-93

9-96

er

Գ Ր Ի Մ Մ



**ԱՍՏԶԷ ԴՐԱՍ
ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԱՂԲԱՏԸ
ՍՊԻՏԱԿ ՕՁ**

1007
33/92 9-

2004

Գերմաներենից թարգմ.
Տիրուհի Կոստանեանց.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Ս. Շարանեի, Նիկոլ. փ. տ. 21

1897

Дозволено цензурою Тифлисъ, 8-го Мая
1897 г.

ԱՍՏԳԻՒՐԱՄ:

Ապրում էր մէկ անգամ մի լաւ աղջիկ,
որի հայրն ու մայրը մեռել էին և նա այն-
պէս աղքատ էր, որ չունէր ո՛չ մի անկիւն
ապրելու և ո՛չ էլ անկողին քնելու համար:
Ա՛խ, այդ աղջիկը ոչ մի բան չունէր, բացի
իւր հագի շորերից և բացի մի պստիկ կտոր
հացից, որ մի բարեսիրտ մարդ տուել էր նորան:

Եւ որովհետեւ այդ լաւ ու հեզ աղջիկն
այդպէս մոռացուած էր ամբողջ աշխարհից;
նա իւր յոյսը դնելով Աստուծոյ վերայ և վրս-
տահ քայլերով գնաց դուրս, դէպի դաշտ մի
պատսպարան գտնելու:

Այդ ժամանակ նորան պատահեց մի աղ-
քատ մարդ, որն ասաց՝ «ա՛խ, ես շատ քաղ-
ցած եմ. մի բան տո՛ւր ինձ ուտելու»: Աղջի-
կըն իսկոյն մօտեցրեց նորան իւր ունեցած
հացը, ասելով՝ «Թո՛ղ Աստուած քեզ օրհնէ.»
և շարունակեց ճանապարհը:

Յետոյ եկաւ մէկ երեխայ, որը հառաչեց
և ասաց՝ «գլուխս սաստիկ մըսում է. խնդրեմ
ինձ մի բան ընծայիր»: Նոյն րոպէին աղջիկը

Հանեց գլխից իւր գտակը և տուեց նորան: Եւ երբ նա մի քիչ ժամանակ էլ առաջ գնաց, նորից պատահեց մէկ ուրիշ երեխայի, որը վերնազգեստ չուներ և դողում էր ցրտից: Աղջիկը նորան էլ տուեց իւր բաճկոնը: Երբ նա աւելի առաջ գնաց, տեսաւ մէկ ուրիշի, որը նորանից խնդրեց մէկ պարեգօտ: Աղջիկը նորան նոյնպէս չմերժեց և տուեց իւր ունեցածը:

Վերջապէս երբ նա հասաւ մէկ անտառ, արդէն մութն էր. այդտեղ դարձեալ նորան մօտեցաւ մէկը և խնդրեց նորանից մի շապիք: Աղջիկն ասաց ինքնիրան՝ «արդէն գիշեր է, ոչ ոք ինձ չի տեսնի, ես կարող եմ իմ շապիքս հանել». և հանելով իւր շապիքը՝ տուեց այդ էլ նորան:

Եւ երբ նա այդպէս մերկ կանգնած էր անտառում և այլևս բոլորովին ոչինչ չուներ, այդ միջոցին յանկարծ աստղերն երկնքից վայր ընկան և բոլորը դառան չոր ու հարթ սպիտակ դրամ: Եւ նա իւր վերջին շապիքն աղքատին ընծայելուն պէս, իսկոյն հագին ունեցաւ մէկ նորը, ամենանուրբ քաթանից:

Յետոյ նա այդ բոլոր փողերը հաւաքեց նոր ստացած շապիքի մէջ և իւր ամբողջ կեանքում հարուստ ու երջանիկ մնաց:

ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԱՂՔԱՏԸ:

Շատ հին ժամանակ, երբ մեր Տէր Յիսուսը դեռ երկրիս վերայ մարդկանց մէջ շրջում էր, այնպէս եղաւ, որ մէկ երեկոյ նա շատ յոգնեց և նախ քան պանդոկ հասնելը գիշերը վրայ հասաւ: Նա նկատեց որ ճանապարհի վերայ երկու տուն կան դէմառդէմ, որոնցից մէկը մեծ ու գեղեցիկ էր, իսկ միւսը փոքր ու անշուք. և մեծը պատկանում էր մի հարուստ մարդու, իսկ փոքրը աղքատի: Այն ժամանակ մտածեց մեր Տէրը՝ «հարուստ մարդուն ծանրութիւն չեմ լինի. ես նորա մօտ կըգիշերեմ»:

Հարուստը, երբ իւր տան դրան ծեծելու ձայնն իմացաւ, բացեց պատուհանը և հարցրեց օտարականին, թէ նա ի՞նչ է ուզում: Յիսուս պատասխանեց՝ «ես ձեզանից խնդրում եմ գիշերելու տեղ»: Հարուստը զննեց ճանապարհորդին ոտից մինչև գլուխ և որովհետեւ մեր սիրելի Տէրը հասարակ շորեր էր հագնում և այնպիսի մարդու տպաւորութիւն չէր

Թողնում, որի գրպանը լիքն է լինում փողով, նա գլուխը շարժեց և ասաց՝ «ես ձեզ չեմ կարող ինձ մօտ ընդունել. իմ սենեակներս լիքն են ցորենով ու խոտով և եթէ ես ամեն մէկ անցորդի, որն իմ դուռն ծեծում է, ներս հրաւիրեմ, այն ժամանակ ինքս պետք է աղքատի ցուպը առնեմ ձեռքս. որոնեցէք ձեզ համար մէկ ուրիշ տեղ»։ Եւ այդ ասելով նա պատուհանը ծածկեց ու դրան առաջ կանգնած Թողեց Տէր Յիսուսին։

Այսպէս, Յիսուս նորանից երեսը դարձրեց և գնաց դէպի փոքր տունը։ Դեռ նա նոր էր դուռը բաղխել, երբ աղքատ մարդն իսկոյն բացեց և խնդրեց ճանապարհորդին ներս մըտնել։ «Դիշերն ինձ մօտ մնացէք» ասաց նա.

— «արդէն մութն է և այսօր էլ չէք կարող հեռու գնալ»։ Մեր Տէր Յիսուսին այդ խօսքերը շատ դուր եկան և նա ներս մտաւ։ Աղքատ մարդու կինն իսկոյն մեկնեց նորան իւր ձեռքը, բարի գալուստ ցանկացաւ և ասաց, որ նա Թող յարմար կերպով տեղաւորուի ու հանգստանայ և աւելացրեց՝ «թէև մենք շատ բան չունինք, բայց ինչ որ կը գտնուի տան մէջ, սրտանց կտանք ձեզ»։ Յետոյ նա կրակի վերայ դրեց գետնախնձորներ և մինչև որ նոքա կ'եփուէին, նա կթեց իւր այծը, որ

գետնախնձորի հետ միասին հիւրասիրէ ճանապարհորդին։ Եւ երբ սեղանը պատրաստուեց ու Տէր Յիսուս նոցա հետ միասին նստաւ և կերաւ, շատ համով թուաց Նորան այդ պարզ ընթրիքը, որովհետև տանտէրերի դէմքերն ուրախ և զուարթ էին։

Երբ նոքա ընթրիքը վերջացրին և քնելու ժամանակն եղաւ, կինը ծածուկ կանչեց իւր մարդուն և ասաց՝ «Լսի՛ր, սիրելի՛ ամուսինս, եկ մենք այս գիշեր պառկենք խոտի վերայ, որ խեղճ օտարականը քնի մեր անկողնի մէջ ու հանգստանայ. նա ամբողջ օրը ճանապարհ է գնացել, անկասկած շատ դադրած կըլինի»։

— «Շատ սիրով» պատասխանեց մարդը.
— «ես նորան այդ կ'առաջարկեմ»։ Եւ գնաց Յիսուսի մօտ ու խնդրեց, որ նա իրանց անկողնի մէջ պառկի ու լաւ հանգստանայ, եթէ այդ իրան հաճելի կըլինի։ Մեր տէրը չէր ուզում նոցա տեղն առնել, բայց նոքա դադար չթողին, մինչև որ վերջապէս հիւրը համաձայնեց իրանց անկողնի մէջ քնել։ Իսկ մարդ և կին իրանց համար խոտէ անկողին պատրաստեցին գետնի վերայ։

Միւս առաւօտ շատ կանուխ նոքա արդէն վերկացան և հիւրի համար լաւ նախա-

ճաշ պատրաստեցին, ինչքան որ կարող էին: Երբ որ արևը դուրս եկաւ և մեր Տէրը զարթոնեց, Նա նոցա հետ միասին նախաճաշեց և յետոյ ուզեց շարունակել իւր ճանապարհը: Երբ Նա պատրաստուեց գնալու, ասաց նոցա՝ — Ուրովհետեւ դուք այդպէս բարի, հիւրասէր և հեզ էիք, այդ պատճառով ընտրեցէք ձեզ համար երեք բան — ես ուզում եմ ձեզ հատուցանել ձեր հիւրասիրութեան փոխարէն»:

Այն ժամանակ ասաց աղքատ մարդը. — Ուրիշ թնչ ցանկամ ինձ համար, եթէ ոչ յաւիտենական երանութիւն, և որ մենք երկուսս, որչափ էլ որ ապրելու լինինք, առողջ մնանք և մեր ամենօրուայ հացն ունենանք: Իսկ երրորդի համար չգիտեմ թէ թնչ ցանկամ»:

Յիսուս ասաց՝ «չէիր ուզենայ մի նոր տուն ունենալ այս հնի տեղը»:

— «Օ, ի հարկէ» ասաց աղքատ մարդը՝ — եթէ որ այդ էլ ունենամ, շատ աւելի լաւ կըլինի»:

Այն ժամանակ Տէրը կատարեց նոցա բոլոր ցանկութիւններն էլ և իսկոյն, նոցա հին տունը դարձրեց նոր, տուեց նոցա միւսնոյն ժամանակ իւր օրհնութիւնն ու հեռացաւ:

Արդէն օրը ճաշ էր եղել, երբ հարուստ մարդը զարթնեց: Նա պատուհանից դուրս

նայեց և տեսաւ իրանց դիմացը մէկ նոր, մաքուր տուն կարմիր աղիւսներով, որտեղ առաջ մէկ հին խրճիթ էր: Այդ ժամանակ նա իւր աչքերը լայն բացեց, կանչեց կնոջն և ասաց՝ «ասա՛ խնդրեմ, այս թնչ է պատահել. դեռ երեկ երեկոյ այգտեղ մի հին, ողորմելի խրճիթ էր, իսկ այսօր նորա տեղը մի գեղեցիկ, նոր տուն է կանգնած: Գնա՛ շուտով իմացիր, թէ այդ թնչպէս է եղել»: Կինը գնաց և հարց ու փորձ արեց աղքատ ընտանիքին. մարդը պատմեց նորան, որ՝ «երեկ գիշեր եկաւ մեզ մօտ մէկ ճանապարհորդ, որը փնտրում էր գիշերելու տեղ և այսօր առաւօտ հեռանալիս, նա մեր երեք ցանկութիւնը կատարեց՝ յաւիտենական երանութիւն, այս կեանքումն առողջութիւն ու մեր օրական հացը և վերջապէս մեր հին խրճիթի փոխարէն, մի նորն ու գեղեցիկը»: Հարուստ մարդու կինը շտապով տուն վերադարձաւ և պատմեց իւր մարդուն, թէ ինչպէս է ամեն բան եղել»:

Մարդն ասաց՝ «ես պատրաստ եմ ինձ կտոր-կտոր անելու. եթէ գիտենայի՛... օտարականն առաջ մեզ մօտ եկաւ և գիշերելու տեղ խնդրեց, բայց ես նրան մերժեցի»:

— «Շտապիր» ասաց կինը. — «նստիր քո ձին ու գնա՛. դու դեռ կարող ես նրան յետ

բերել և այն ժամանակ դու էլ մեզ համար երեք բան ցանկացիր»:

Հարուստ մարդը լսեց կնոջ այդ լաւ խորհուրդը, հեծաւ իւր ձին, քչեց և ճանապարհին պատահեց Տէր Յիսուսին: Հարուստը նորան տեսնելուն պէս, սկսեց խօսել մեղմ ձայնով և սիրալիր կերպով խնդրում էր, որ նա չը նեղանայ երեկ գիշեր նորան իսկոյն ներս չհրաւիրելու համար, որովհետեւ տան դրան բանալին կորցրել էր: Եւ աւելացրեց՝ «Թէ որ դուք նորից այս ճանապարհով վերադառնաք, ինձ մօտ իջեանեցէք անպատճառ»:

«Այո՛» ասաց մեր Տէրը. — «Եթէ ես երբեք ևիցէ վերադառնամ, այդպէս կանեմ»:

Այն ժամանակ հարցրեց հարուստը, թէ արդեօք կը համարձակուի՞ ինքը նոյնպէս երեք ցանկութիւն առաջարկել, ինչպէս և իւր հարեանը: Այո, պատասխանեց մեր սիրելի Տէրը. կարող ես, միայն թէ այդ լաւ չի լինի քեզ համար և աւելի լաւ է, որ ոչինչ չխնդրես: Հարուստը կարծեց, թէ նա ուզում է արդէն մի բան գտնել իւր երջանկութեան համար, միայն չգիտէր գլուխ կըգոյ՞ թէ ոչ: Յիսուս ասաց նորան՝ գնա՛ տուն և այն երեք խնդիրները որ դու ունիս, թող կատարուին: Ուրեմն այդպէս, հարուստը խօսք առաւ ճա-

նապարհորդից, որ եթէ երեք բան խնդրէ իրան համար, կը կատարուին: Նա յետ դառաւ դէպի տուն և սկսեց մտածել, թէ ի՞նչ ցանկայ: Երբ նա այդպէս մտածմունքի մէջ էր և ձիու սանձը թողեց, ձին սկսեց թռչկոտել այնպէս որ նորա մտածմունքները միշտ խանգարուում էին և նա էլ չէր կարող կենդրոնանալ: Նա խփեց ձիու վզին և ասաց «հանգիստ կ'աց.» բայց ձին նոր-նոր տեսակ շարժումներ էր անում. այդ ժամանակ նա բարկացաւ և կանչեց անհամբեր՝ «ես ուզում եմ, որ վիզդ կոտրուի»: Եւ այդ խօսքերն ասաց թէ չէ, ձին ընկաւ գետին ու սատկեց: Այդպէսով նորա առաջին ցանկութիւնը կատարուեց: Որովհետեւ նորա բնաւորութեան մէջ կար ժլատութիւն, նա ձիու բոլոր սարքը հանեց, քաշ արեց իւր մէջքից և ստիպուած էր ոտով տուն գնալ: «Դու առաջդ դեռ երկու ցանկութիւն էլ ունիս», մտածում էր նա և դորանով մխիթարում էր ինքն իրան:

Երբ նա աւագի միջով կամաց կամաց առաջ էր գնում և կէսօրին արեւը նորան այրում էր, նա շատ շոգեց ու յուսահատուեց, որովհետեւ ձիու թամբը սեղմում էր նորա մէջքը և նա մինչև այդ ժամանակ չէր որդշել, թէ ի՞նչ խնդրէ իրան համար: «Եթէ որ

ես աշխարհիս բոլոր հարստութիւններն ու
զանձերը ցանկամ» ասում էր նա ինքն իրան,
— «դարձեալ ինձ այս կամ այն բանը կը պակա-
սի, ես այդ առաջուց գիտեմ. բայց ես ուզում
եմ այնպէս անել, որ ինձ էլ ոչ մի բան չը
մնայ ցանկալու»: Այդ ժամանակ նա հառա-
չեց և ասաց՝ «այո՛, եթէ ես այն բաւարացի
գիւղացին լինէի, որը նոյնպէս երեք ցանկու-
թիւն ունենար և իրան օգնել կարողանար,
նա կը խնդրէր ամենից առաջ՝ բաւական շատ
գարեջուր, երկրորդ՝ այնքան գարեջուր, որ-
չափ որ կարողանար խմել և երրորդ՝ էլի մէկ
տակառ գարեջուր»: Երբեմն նա կարծում էր,
որ արգէն գտաւ, թէ ինչ պէտք է խնդրէր
իրան համար, բայց դարձեալ նորան թւում
էր, որ դեռ քիչ են իւր մտածած ցանկու-
թիւնները:

Եւ այդ րոպէին յանկարծ նորա մտքովն
սնցաւ, որ հիմայ իւր կինը տանը մի հով
սենեակում նստած, լաւ լաւ բաներ է ու-
տում և այդ միտքը նորան այնպէս զայրա-
ցրեց, որ առանց մտածելու ասաց՝ «ես կու-
գենայի, որ իմ կինս տանն այս թամբի վե-
րայ նստած լինէր և էլ չկարողանար նորա
վերայից իջնել. այո՛, այդպէս աւելի լաւ կը-
լինէր, քան թէ ես այս ծանր բեռը քաշ եմ

տալիս իմ մէջքիս վերայ: Այդ վերջին խօսքը
նորա բերանից դուրս գալուն պէս, թամբը
նորա մէջքի վերայից անհետացաւ և նա նկա-
տեց, որ իւր երկրորդ ցանկութիւնը նոյնպէս
կատարուեց: Այդ միջոցին սաստիկ շոգն ըն-
կաւ. նա սկսեց վազել, որ շուտով տուն հասնի
և իւր սենեակում առանձնացած, մի մեծ ու
վերջին ցանկութեան մասին մտածէ:

Բայց երբ նա տուն եկաւ և սենեակի
դուռը բացեց, տեսաւ որ իւր կինը նստած է
թամբի վերայ և չի կարող ցած իջնել և միև-
նոյն ժամանակ լալիս ու ճչում էր: Այն ժա-
մանակ ասաց մարդը՝ «դու գոհ եղի՛ր, ես ու-
զում եմ աշխարհիս բոլոր հարստութիւնները
խնդրել քեզ համար, միայն թէ դու տեղիցդ
մի շարժուի՛ր: Բայց կինը նորան նախատեց
յիմար անուանելով և պատասխանեց՝ «ինձ քնչ
օգուտ աշխարհիս բոլոր հարստութիւններից,
եթէ որ ես թամբի վերայ պէտք է միշտ
նստած մնամ, դու ես ցանկացել, որ ես թամ-
բի վերայ նստեմ և դու էլ պէտք է օգնես,
որ ես սորա վերայից նորից իջնել կարողա-
նամ»: Հարուստն ուզեանար, չուզեանար, ստի-
պուած էր երրորդ ցանկութիւնն այն խընդ-
րել, որ իւր կինը թամբից իջնի: Եւ այդ ցան-
կութիւնն իսկոյն կատարուեց:

Ուրեմն նա այդ ամենից ոչ մի օգուտ չունեցաւ, բացի զայրոյթը, չարչարանքը, նախատինքը և իւր ձիւ կորուստը: Իսկ նորա հարեան աղքատ մարդիկն ապրում էին գոհ վիճակի մէջ, խաղաղ ու բարեպաշտ, մինչև իրանց երջանիկ կեանքի վերջը:



Ս Պ Ի Տ Ա Կ 0 2

Շատ վաղուց ապրում էր մէկ թագաւոր, որի իմաստութիւնն յայտնի էր ամբողջ երկրին: Նորան ոչ մի բան անյայտ չէր մնում և այնպէս գիտէին թէ՛ շատ գաղտնի բաների մասին էլ, նա տեղեկութիւն էր ստանում օգի միջով: Բայց նա ունէր մի հազուագիւտ սովորութիւն. — ամեն ճաշի, երբ սեղանի վերայից հաւաքւում էր ամեն բան և էլ ոչ ոք ներկայ չէր լինում, պէտք է մէկ հաւատարիմ ծառայ էլի մի աման ներս բերէր. բայց այդ ամանը ծածկուած էր և ծառան չգիտէր, թէ մէջն ինչ կայ և ոչ մի մարդ էլ չգիտէր, որովհետև թագաւորն այդ ամանը միայն այն ժամանակ էր բաց անում ու նորա մէջինն ուտում, երբ որ բոլորովին մենակ էր մնում:

Այդպէս երկար ժամանակ նոյն բանը շարունակւում էր: Մէկ օր էլ, երբ ծառան նորից այն խորհրդաւոր ամանը դուրս բերեց, էլ չկարողացաւ համբերել և տարու իւր սենեակը: Երբ նա սենեակի դուռը զգուշու-

Թեամբ կողպեց, բարձրացրեց ամանի խուփը, տեսաւ որ մէկ սպիտակ օձ կար այնտեղ: Տեսնելով այդ, նա չկարողացաւ իրան զսպել և ուզեց փորձել. նա մէկ պստիկ կտոր կըտրեց օձից և դրեց բերանը: Բայց հազիւ իւր լեզուով շոշափել էր այդ կտորը, մէկ էլ, յանկարծ լուսամուտի առաջ լսեց մի քաղցրաձայն, հազուադիւտ խօսակցութիւն: Նա իսկոյն մօտեցաւ պատուհանին և լսեց որ ճնճղուկներն են իրար հետ խօսում և միմեանց պատմում են, ինչ որ տեսել են դատերում և անտառներում: Ուրեմն, օձի համն առնելը, նորան տուեց շնորհք հասկանալու կենդանիների լեզուն:

Այնպէս պատահեց, որ նոյն այդ օրը Թագուհին կորցրել էր իւր ամենագեղեցիկ մատանին և կասկածում էին թէ հաւատարիմ ծառան է գողացել, որը պալատի ամեն սենեակը մտնում ելնում էր: Թագաւորը նորան մօտը կանչեց և յանդիմանեց խիստ խօսքերով՝ որ եթէ նա մինչև միւս առաւօտ գողացողի անունը չասէ, նորան կըպատժեն: Ծառան թէև ասում էր, որ ինքն անմեղ է, բայց այդ չէր օգնում նորան. նա ոչ մի կերպ չէր կարողանում արդարանալ: Այդպէս նա անհանգիստ սրտով և ահ ու դողով ցած ի-

ջաւ բակը և մտածում էր, թէ ինչ կերպով օգնէ իրան: Բակում, մէկ հոսող ջրի մէջ բազերը մէկը միւսի կողքին շարուած հանգըստանում էին. նոքա կտուցներով մաքրում էին իրանց մարմինը և մի զարմանալի մտերմական խօսակցութիւն էին սկսել: Ծառան կանգնեց նոցա մօտ և ականջ դրեց:— Բազերը միմեանց պատմում էին, թէ այդ օրն առաւօտը որտեղ են պտտել և ինչ լուռ ու համով կերակուր են գտել: Այդ ժամանակ մէկն ասաց բարկացած՝ «իմ ստամոքսիս մէջ մի ծանր բան է ընկել. գետնին, Թագուհու լուսամուտի առաջ մի մատանի էր ընկած և ես շտապով, սխալմամբ կուլ տուի մատանին»: Ծառան այդ լսելով, իսկոյն բռնեց նորան, տարաւ խոհանոց և ասաց խոհարարին՝ «մօր թիւր սորան, սա արդէն շատ է գիրացել»:— «Այո՛» ասաց խոհարարը և առաւ ձեռքն ու շոշափեց նորան.— այս բազին հարկաւոր չէ նորից կշռել. սա արդէն վաղուց երևի սպասում էր, որ իրան խորովենք: Եւ նա բազի վիզը կտրեց ու երբ իստակեց, Թագուհու մատանին նորա փորից ելաւ: Ծառան չափազանց ուրախացաւ, իսկոյն տարաւ մատանին Թագաւորի մօտ և հեշտութեամբ կարողացաւ իւր անմեղութիւնը ցոյց տալ: Թագաւորն էլ

1004
33199

ուղենալով իւր անարգարութիւնն ուղղել, թոյլ տուեց, որ ծառան իրան համար մի պարգև խնդրէ և խոստացաւ տալ նորան իւր պալատում ամենամեծ պատիւը, որը որ ինքը կուզէ:

Ծառան ամեն բան մերժեց և խնդրեց միայն ընծայել իրան մի ձի և ճանապարհա-ծախս, որովհետև նա շատ սէր ունէր աշխարհք տեսնելու և մի ժամանակ ճանապարհորդելու այս ու այն կողմը: Երբ Նորա խընդիրքը կատարուեց, նա ճանապարհի պատ-րաստութիւն տեսաւ, նստաւ թագաւորի պարգևած հրեղէն ձին և գնաց: Մէկ օր նա անցաւ մի լճակի մօտով, որտեղ նկատեց երեք ձուկ, որոնք մոլորուել էին եղէգների մէջ և ջուր էին որոնում:

Թէպէտ ասում են, որ ձկները համր են, բայց երիտասարդ ծառան իմացաւ նոցա գանգատը, որ ասում էին միմեանց՝ «ուրեմն, մենք առանց ջրի մնալով, այսպէս թշուառ կերպով պիտի սատկենք»: Եւ որովհետև նա շատ բարի սիրտ ունէր, իջաւ ձիուց և երեք ձկանն էլ գցեց նորից ջրի մէջ: Նոքա ուրախութիւնից թռչկոտեցին, դուրս հանեցին իրանց գլուխները և կանչեցին նորա յետևից՝ «մենք քեզ կըյիշենք և կը վարձատրենք»:

Նա քշեց իւր ձին և երբ մի քիչ էլ առաջ գնաց, նորան թուաց, որ իւր ոտքերի մօտով, աւազի միջից մի ձայն է լսուում: Նա ականջ դրեց և իմացաւ, որ մըջիւնների թագաւորը տրտնջում է՝ «երանի՛ թէ մարդիկ իրանց անշնորհք կենդանիներով մեզ անհանգիստ չանէին. ահա այս լիմար ձին իւր ծանր պայտերով անգութ կերպով տրորեց իմ ժողովրդիս»: Նա այդ լսեց թէ չէ, ձիու գլուխը դարձրեց և գնաց կողքի ճանապարհով: Այդ ժամանակ մըջիւնների թագաւորը կանչեց նորա յետևից՝ «մենք քեզ կըյիշենք և կը վարձատրենք»:

Ճանապարհը տանում էր նորան դէպի մի անտառ, որտեղ նա տեսաւ մի ագռաւահայր և մի ագռաւամայր, որոնք բնի առաջ կանգնած, դուրս էին գցում իրանց ձագուկներին: — «Կորէք դուք անպիտաններ», ասում էին նոքա. — «մենք ձեզ էլ չենք կարող պահել ու կշտացնել. դուք արդէն բաւական մեծ էք, գնացէք ձեր գլխի ճարն արէք, ձեզ համար կերակուր գտէք»: Խեղճ ձագուկները գետնին ընկած թրթփում էին և թափ էին տալիս իրանց թևիկներն ու սիրտ մաշող ձայնով ծփծփում էին: «Մենք, օգնութեան կարօտ ձագուկներս, մենք պիտի մեզ համար ուտե-

լու բան գտնենք, որ դեռ թուշել անգամ չենք կարող. մեզ էլ ինչ է մնում, եթէ ոչ այստեղ անօթութիւնից մեռնել: Բարի երիտասարդն իջաւ ձիուց, մորթեց նորան իւր դաշոյնով և թողեց ձիուն այդտեղ, որ պստիկ, անպաշտպան ձագուկների համար երկար ժամանակ սնունդ լինի, մինչև որ նոքա մեծանան և կարողանան թուշել: Ձագուկներն իսկոյն մօտեցան ձիուն, լաւ կշտացան ու միաբերան աղաղակեցին՝ «բարի տղայ, մենք քեզ կըլիշենք և կըվարձատրենք»:

Յետոյ երիտասարդը շարունակեց ոտքով իւր ճանապարհը: Երբ նա երկար ժամանակ գընաց, հասաւ մէկ մեծ քաղաք, որտեղ աղմուկ ու մեծ իրարանցում կար փողոցներում. և մէկ մարդ ձիու վերայ հեծած, անցնում էր փողոցներով և յայտարարում էր, որ թագաւորի աղջիկը փնտրում է իրան համար փեսացու, բայց ով որ ուզում է նորա հետ ամուսնանալ, նա պէտք է մի դժուար յանձնարարութիւն կատարէ և եթէ չկարողանայ յաջող կերպով դուրս գլխէլ, նա իւր կեանքը կըզրկուի:

Շատերն արդէն փորձէի էին, բայց զուր տեղն իրանց կեանքն էին կորցրել: Երիտասարդ ծառան երբ գնաց տեսաւ թագաւորի

աղջկան, նորա գեղեցկութիւնից այնպէս հիացաւ ու շլացաւ, որ բոլոր վտանգները մոռացաւ, ներկայացաւ թագաւորին և յայտնեց իրան իբրև փեսացու:

Իսկոյն տարան նորան ծովի մօտ և նորա աչքերի առաջ մի ոսկի մատանի գցեցին այնտեղ: Յետոյ թագաւորն ասաց, որ նա պէտք է այդ մատանին դարձեալ ծովից հանէ ու յետ բերէ պալատ և աւելացրեց՝ «եթէ որ դու առանց մատանիքի ծովից դուրս ելնես, քեզ նորից կըգցեն այնտեղ, մինչև որ դու ալիքների մէջ խեղդուիս: Բոլոր բազմութիւնը, որ հաւաքուած էր այդտեղ, ցաւում էր սիրուն երիտասարդի վերայ. և ամենքը նորան թողին ծովի ափը մենակ ու տխուր հեռացան:

Երիտասարդը ձեռքերը ծալած կանգնեց ծովի մօտ և մտածում էր, թէ ինչ անէ: Յանկարծ նա տեսաւ որ երեք ձուկ դէպի ինքն են գալիս լողալով. նոքա ճիշդ այն ձկներն էին, որոնց կեանքը նա փրկել էր: Մէջտեղի ձուկը բռնել էր մէկ խեցի իւր բերանով, որը ծովափում երիտասարդի ոտքերի առաջ դրեց և երբ նա բարձրացրեց ու բացեց խեցին, տեսաւ նորա մէջ ոսկի մատանին:

Ուրախ սրտով նա բերեց թագաւորին տուեց այդ մատանին և սպասում էր, որ նա

կըստանար նորա խոստացած վարձը: Բայց թագաւորի հպարտ աղջիկն երբ իմացաւ, որ երիտասարդը ծագումով իրան հաւասար չէ, նա պահանջեց, որ մի երկրորդ խնդիր էլ լուծէ երիտասարդը: Եւ ցած իջնելով իւր ապարանքից, նա գնաց պարտէզ, իրան-ձեռքով շաղ տուեց տասը պարկ լիքը կորեկ կանաչ խոտի մէջ և ասաց՝ «վաղը, դեռ արեւը չծագած, սոքա պէտք է ժողովուած լինին և ոչ մի հատիկ չպիտի պակսի»: Երիտասարդը չըգիտէր, թէ ինչպէս կատարէ այդ գործը. նա շատ տխուր ու տրտում նստել էր և սպասում էր, որ լուստբացին իրան կըտանեն ըսպանելու: Բայց երբ արեւի առաջին ճառագայթներն ընկան պարտէզի մէջ, նա տեսաւ, որ բոլոր տասը պարկն էլ լիքը լեցուած են և ոչ մէկ հատիկ պակաս չէ: Մըջիւնների թագաւորն իւր հազարաւոր մըջիւններով գիշերն եկել էր պարտէզ և երախտագէտ մանրիկ կենդանիները բոլոր կորեկի հատիկները մէկ-մէկ հաւաքել ու պարկերի մէջ բերնէ բերան լցրել էին:

Առաւօտը վաղ, թագաւորի աղջիկն ինքը գնաց պարտէզ և զարմացած մնաց, որ երիտասարդն այդ գործը գլուխ է բերել: Բայց նա չկարողացաւ իւր հպարտութիւնը զսպել

և ասաց՝ դու չպէտք է «ուելի վաղ իմ ամուսինս լինիս, մինչև որ կենաց ծառից ինձ համար մի խնձոր բերես»: Երիտասարդը մնացել էր մոլորուած. չգիտէր թէ այդ ծառը ո՞րտեղ է լինում: Նա պատրաստուեց, յուսահատ ճանապարհ ընկաւ և ուզում էր այնքան առաջ գնալ, մինչև որ նորա ոտները կըդիմանային, միայն թէ շատ քիչ յոյս ունէր, որ կըգտնի թագաւորի աղջկայ պահանջածը:

Երբ նա երեք տէրութեան միջով անցաւ և երեկոյեան մէկ անտառ հասաւ, նստաւ մէկ ծառի տակ և ուզեց քնել: Այդ ժամանակ նա ծառի ճիւղերի միջից լսեց մի ձայն և մի ոսկի խնձոր ընկաւ նորա ձեռքի մէջ: Գորանից յետոյ իսկոյն ցած թռան նորա մօտ երեք ագռաւներ, նստան նորա ծնկան վերայ և ասացին՝ «մենք այն երեք փոքրիկ ագռաւներն ենք, որոնց դու քաղցածութիւնից ազատեցիր: Մենք լսեցինք, որ դու ոսկի խնձոր ես փնտռում, այդ պատճառով ծովեր անցանք, հասանք մինչև աշխարհիս ծայրը, որտեղ լինում է կենաց ծառը և քեզ համար բերինք այս խնձորը»:

Ուրախ ու զուարթ բերեց երիտասարդն ոսկի խնձորը տուեց թագաւորի գեղեցիկ աղջկան, որ էլ ոչ մէկ բան չունէր ասելու:

Նոքա այդ խնձորը կիսեցին, միասին կերան
և նոյն րոպէին թագաւորի աղջկայ սիրտը
լցուեց սիրով դէպի երիտասարդ ծառան և
նոքա ամուսնացան ու հասան խաղաղ երջան-
կութեան, մինչև իրանց խորին ծերութիւնը:



472

0009486

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004486

ՆՈՅՆ ԹԱՐԳՄԱՆՁԻՆՆ Է

1. Յովհան Գուրաբէրդ.	.	.	15
2. Դօկտօր Զէններ	.	.	20
3. Մանկական թատրոն	.	.	1 —
4. Իբսէնի, Նօրա	.	.	30
5. Լիբ Արքայ	.	.	5
6. Գայլ	.	.	3
7. Թուղթ և չին գրքեր	.	.	5
8. Տիրօլացի աղջիկ և ժլատ	.	.	5
9. Մեր պապի գաւազանը	.	.	5
10. Անհանգիստ գիշեր	.	.	5
11. Որսի գնդակ	.	.	5
12. Մայրական սէր	.	.	5
13. Մրցում	.	.	5
14. Գէսրգ Սրաբբ	.	.	5
15. Զինական Առասպելներ.	.	.	15
16. Զինուոր Յակովբ	.	.	7
17. Կեանքի դպրոց	.	.	10
18. Օսիկն ու մարգարիտը, Նապոտտակն և ոգնին, Դայլն ու մարդը	.	.	10
19. Աստղէ դրամ, Հարուստը և աղքատը, Սպիտակ օձ	.	.	—